



**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ
ՏԱՐԵԼԻՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՐՉԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում Կոտայքի մարզում նախատեսված միջոցառումների ծրագրի շրջանակներում Արզական համայնքը կազմակերպել է համապատասխան նախաձեռնություններ:

Արզականի միջնակարգ դպրոցի դահլիճում ապրիլի 10-ին բեմականացվել է Հրանտ Մաթևոսյանի «Մեծամոր» վիպակը: Պատմական այս փաստի բեմականացումը նպատակ է ունեցել ներկայացնել հայ ժողովրդի պատմության որոշ իրողություններ՝ Մեծ եղեռնից մինչև մեր օրեր: Ներկայացմանը ներկա են եղել համայնքի ղեկավարը, գյուղի բնակիչներ, ծնողներ, մանկավարժներ դպրոցականներ:

Բեմականացումից հետո մանկավարժները և դպրոցականներն այցելել են Հայոց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմեղ զոհերի հիշատակին: Ապրիլի 11-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր են այցելել Արզականի գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչները, ավագանու անդամները և համայնքի բնակիչները:

Նույն օրը երեկոյան Արզականի գրադարանում անցկացվել է «Եվ նորից հառնեց Հայաստան աշխարհը» խորագրով միջոցառում, որի ընթացքում ներկայացվել է <<Հայոց ցեղասպանությունը պատմության էջերում>> խորագրով զեկույց, որին հաջորդել է Գևորգ Էմինի «Հավերժի ճամփորդ» ստեղծագործության մոտիվներով բեմականացումը: